ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հոկտեմբերի 2022 թվականի N 1636 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱ-ԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի N 138-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի փետրվարի 6-ի «Ագրոքիմիական ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և գործառույթներ վերապահելու մասին» N 138-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) որոշման 3-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ ենթակետով.

«5) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված հողային բարեփոխումներին միտված ծրագրերին համապատասխան՝ գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքի, փոխանակման և միավորման

գործարքի կնքում, գործարքի փաստաթղթերի նախապատրաստում և կողմերի ներկայացուցչության ապահովում՝ համապատասխան լիազորագրերի հիման վրա։».

2) որոշմամբ հաստատված հավելվածի՝

ա. 11-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ ենթակետով.

«4) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված հողային բարեփոխումներին միտված ծրագրերին համապատասխան գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետության բարձրացում՝ գյուղատնտեսական նշանակության հողերի կոնսոլիդացման, առուվաճառքի, փոխանակման և միջնորդության միջոցով։»,

բ. 12-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ ենթակետով.

«4) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված հողային բարեփոխումներին միտված ծրագրերին համապատասխան՝ գյուղատնտեսական նշանակության հողերի չօգտագործման մակարդակի կրճատում, մասնատվածության մակարդակի նվազեցում, օգտագործման արդյունավետության բարձրացում և հողերի շուկայի զարգացում։»,

գ. 13-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 13.1-ին ենթակետով.

«13.1) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված հողային բարեփոխումներին միտված ծրագրերին համապատասխան՝ հողերի առուվաճառքի, փոխանակման և միջնորդության միջոցով իրականացնում է գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) ծրագրեր, այդ ծրագրերի շրջանակներում իր կողմից ձեռք բերված հողերի բարելավման աշխատանքներ, ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքում է հողերի նկատմամբ գործարքների (առուվաճառքի, փոխանակման, միավորման) կնքման համար անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստման վճարովի մատուցման պայմանագրեր.»,

դ. 14-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ ենթակետով.

«6) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված հողային բարեփոխումներին միտված ծրագրերին համապատասխան՝ գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքի, փոխանակման և միավորման գործարքի կնքում, գործարքի փաստաթղթերի նախապատրաստում և կողմերի ներկայացուցչության ապահովում՝ համապատասխան լիազորագրերի հիման վրա»,

ե. 29-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 29.1-ին կետով.

«29.1. Սույն կանոնադրության 13-րդ կետի 13.1-ին ենթակետով նախատեսված գործառույթի իրականացման արդյունքում ձեռք բերված գյուղատնտեսական նշանակության հողերը և դրանց վաճառքից ստացված գումարները կազմակերպությունն իրավունք ունի տիրապետել, տնօրինել և օգտագործել միայն հիմնադրի կողմից հաստատված հողային բարեփոխումներին միտված ծրագրերի պահանջներին համապատասխան:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

20.10.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ